



Բախվել է 50 ավտոմեքենա



Կլիմայի փոփոխություն



70-ականների ԱՄՆ-ի բնապահպանական ճգնաժամը



Ես սիրում եմ բամբասել



արտակարգ թերթ

N 43 (412) 25.11.2011 - 1.12.2011 www.emergency.am www.mes.am

Նորարարական տեխնոլոգիաները ԱԻՆ ճգնաժամային կառավարման կենտրոնում



Նոյեմբերի 22-ին Արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման կենտրոնում Երեւանի քաղաքապետարանի Երեւան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոնի ներկայացուցիչներն ԱԻ նախարար Արմեն Երիցյանին ներկայացրեցին Երեւանում տարբեր արտակարգ իրավիճակների հնարավոր սցենարների հետևանքների ու խոցման գոտիների ավտոմատ որոշման փորձնական ծրագիրը:

Ծրագիրը հնարավորություն է տալիս տարբեր աղետների դեպքում մոնիտորների վրա տեսնել աղետից տուժած տարածքի չափերը, մուտքագրված շառավղով տարածքում առկա կարելու օբյեկտները՝ հիվանդանոցներ, դպրոցներ, մանկապարտեզներ, այլ հաստատություններ, ինչպես նաև յուրաքանչյուր օբյեկտի մասին ամբողջական տեղեկատվություն:

տեղադրվող սարքի՝ արբանյակային մշտադիտարկման համակարգի ծրագիրը: Մեքենայի վրա տեղադրվող այս սարքը հնարավորություն է տալիս իրական ռեժիմով տեսնել մեքենայի դիրքը քարտեզի վրա և մեքենայի հետ կապված ցանկացած տեղեկատվություն՝ վառելիքի քանակ, արագություն, տեղակայման վայրից դուրս գալու և վերադառնալու ժամ և այլն: Գրանցվող բոլոր տվյալներն ավտոմատ ձևով արխիվացվում են պահպանվում են:

ԱԻ նախարարը հանձնարարեց ուսումնասիրել ծրագիրը, ինչպես նաև Երեւանի հրշեջ-մասերի մեքենաների վրա փորձնական տեղադրել ներկայացված սարքերը:

ՃԿԿ-ն նաև ՀԱՊԿ-ի ուշադրության կենտրոնում

Նոյեմբերի 22-ին Արտակարգ իրավիճակների նախարարություն այցելեց Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) պատվիրակությունը՝ ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի տեղակալ Վալերի Սեներիկովի գլխավորությամբ:

Պատվիրակությունը Հայաստան է ժամանել նպատակ ունենալով մի շարք նախարարությունների և գերատեսչությունների հետ քննարկելու և ճշգրտելու մյուս տարի Հայաստանում անցկացվելիք ՀԱՊԿ օպերատիվ արձագանքման հավաքական ուժերի համալիր գործավարժության նախապատրաստման աշխատանքները: Այդ հարցերը քննարկվեցին նաև Արտակարգ իրավիճակների նախարարության ներկայացուցիչների հետ:

Մեծ կարելություն տալով համատեղ գործավարժությանը՝ ՀԱՊԿ ներկայացուցիչները

ցանկացան լսել հայկական կողմի կարծիքները և առաջարկները՝ կապված գործարժույթի կազմակերպման հետ: Զննարկվեցին գործարժույթի տեսլական, շտաբային և արակտիկ փուլերի բաժանման և այլ հարցեր:

ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի տեղակալը նշեց, որ մյուս տարի կդիտարկվի նաև Հայաստանի Արտակարգ իրավիճակների նախարարության հետ համատեղ ուսումնավարժություն անցկացնելու հնարավորությունը:

Հյուրերն այցելեցին նաև ԱԻՆ ճգնաժամային կառավարման կենտրոն, ծանոթացան դրա աշխատանքին: Պարոն Սեներիկովը նշեց, որ Կենտրոնը շատ արդյունավետ է աշխատում, գործարկված է ամբողջ ծավալով, և ընդգծեց, որ շատ լավ կլինի, եթե ճգնաժամային կառավարման կենտրոնն իր բոլոր գործառնություններով ներգրավվի գործարժույթի և ընդհանուր սցենարի մեջ:

ԱԻՆ - ՅՈՒՆԻՍԵՖ. շարունակական համագործակցություն

Նոյեմբերի 22-ին Արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանն ընդունեց Հայաստանում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի գրասենյակի (UNICEF) նորանշանակ մշտական ներկայացուցիչ տիկին Մանյա Քենրիթե Աիրենսին:



Շնորհավորելով տիկին Աիրենսին նշանակման կապակցությամբ՝ նախարար Երիցյանը նշեց, որ Արտակարգ իրավիճակների նախարարությունն արդեն վաղուց է համագործակցում ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ և հույս հայտնեց, որ այդ համագործակցությունը շարունակական կլինի:

ՅՈՒՆԻՍԵՖ-ի մշտական ներկայացուցիչը, շնորհակալություն հայտնելով շնորհավորանքների համար, նշեց, որ հիմնադրամը մարդասիրական և զարգացման աջակցող կազմակերպություն է: - Թեև մեր եմ նշանակվել այս պաշտոնում, բայց արդեն ծանոթացել եմ իրականացվող ծրագրերին: Հատկապես տպավորված եմ Ձեր՝ աղետների ռիսկի նվազեցման ռազմավարությամբ: Այն պարզ ցույց տվեց, թե դուք որքան առաջ եք գնացել: Մենք ուրախ ենք աջակցելու Արտակարգ իրավիճակների նախարարությանն ինչպես աղետների կանխարգելման, այնպես էլ՝ աղետների ռիսկի նվազեցման ոլորտում, - ասաց տիկին Աիրենսը:

Նախարար Երիցյանը ներկայացրեց նախարարության կառուցվածքը, հիմնական գործառնությունները: Նախարարության ձեռքբերումներից առանձնացրեց ճգնաժամային կառավարման կենտրոնի և Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմի ստեղծումը: ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի մշտական ներկայացուցիչն այցելեց նաև ճգնաժամային կառավարման կենտրոն, ծանոթացավ դրա տեխնիկական հնարավորություններին և աշխատանքին:

Ռադիոակտիվ ջուրը հասել է սահմանաբաժան գծին

Մարտի 11-ի երկրաշարժից ետևանալից տուժած «Ֆուկուշիմա 1» ատոմակայանից ռադիոակտիվ ջրերը հասել են սահմանաբաժան գծին՝ Խաղաղ օվկիանոսի ճապոնական ափից 4000 կմ արեւելք:



Ճապոնիայի Ծովերկրային գիտության և տեխնոլոգիաների գործակալության տվյալներով՝ ռադիոակտիվ ցեզիում-137-ը 1 լիտրում 0.1-0.01 բեքերել կլինի նոյեմբերի վերջին, ինչը 10-100 անգամ ավելին է, քան եղել էր մինչև աղետը:

Խտացումը կհամապատասխանի խմելու ջրի կառավարության հաստատած չափանիշներին, բայց մոնիտորինգ կիրականացվի ձկների ու ծովամթերքի վրա ունեցած ազդեցությունը պարզելու համար:

Հետազոտողների թիմն ուսումնասիրել է հոսանքը՝ հիմնվելով «Ֆուկուշիմա 1»-ի շրջակայքի ջրերում ռադիոակտիվ մակարոնի վերաբերյալ տվյալների վրա և հաշվի առնելով կոն-

վեցիան և այլ գործոններ: Ռադիոակտիվ ջուրը, որն արտահոսել է ատոմակայանից, սկզբում շարժվել է ափի երկայնքով, այնուհետև՝ հեռացել ցամաքից: Հետազոտողները հաշվարկել են, որ այն միջազգային սահմանաբաժան գծին է հասել թափվելուց 4 կամ 5 ամիս հետո: >>> 5



քրոնիկոն



Աին
միացյալ հեռախոսահամարն է
911

Ղեկավարային թունավորում

Նոյեմբերի 17-ին «1-03» ծառայությունից տեղեկություն է ստացվել, որ ժամը 17.57-ի սահմաններում դեղորայքից թունավորումով «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն է տեղափոխվել Երեւանի Լվովյան 13 շենքի 12-րդ բնակարանի բնակչուհի՝ 1965 թ. ծնված Գայանե Ղազարյանը:

Ըստ բժիշկների՝ տուժածի առողջական վիճակը բավարար է:

• Նոյեմբերի 19-ին «1-03» ծառայությունից տեղեկություն է ստացվել, որ ժամը 00.29-ին դեղորայքային թունավորումը «Արմենիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել Ջ. Անդրանիկի 68 շենքի 18-րդ բնակարանի բնակչուհի՝ 1983 թ. ծնված Նարինե Մխիթարյանը:

Բժիշկները տուժածի առողջական վիճակը գնահատել են միջին ծանրության:

• Նոյեմբերի 23-ին, «1-03» ծառայությունից տեղեկություն է ստացվել, որ ժամը 18.29-ին եւ ժամը 02.17-ին դեղորայքային թունավորումը «Արմենիա» բժշկական կենտրոն են տեղափոխվել Երեւանի Կուրդիյան 21/2 շենքի 12-րդ բնակարանի բնակչի՝ 1971 թ. ծնված Լիպարիտ Մարտիրոսյանը եւ Սեպուհի 18 տան բնակչուհի՝ 1990 թ. ծնված Աննա Մարտիրոսյանը:

Բժիշկները Լ. Մարտիրոսյանի վիճակը գնահատել են ծանր, իսկ Ա. Մարտիրոսյանինը՝ միջին ծանրության:

• Նոյեմբերի 23-ին, «1-03» ծառայությունից տեղեկություն է ստացվել, որ ժամը 04.32-ի սահմաններում Երեւանի Զ. Ավետիսյան 41 շենքի 13-րդ բնակարանի բնակչուհի՝ 1989 թ. ծնված Ռոզա Չոխյանը դեղորայքային թունավորումով տեղափոխվել

է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն:

Ըստ բժիշկների՝ տուժածի առողջական վիճակը բավարար է:

Թունավորում շմուլ գազից

Նոյեմբերի 21-ին, Շիրակի մարզից տեղեկություն է ստացվել, որ շմուլ գազից թունավորումով Գյումրիի «Ավստրիական» մանկական հիվանդանոց են տեղափոխվել Վահրամաբերդ Գյուլի 8-րդ տան բնակչուհի՝ 2005 թ. ծնված Գեուրգ եւ 2008 թ. ծնված Անահիտ Չախոյանները:

Երեխաները, ստանալով համապատասխան բուժօգնություն, դուրս են գրվել հիվանդանոցից:

Մեռել եւ անօգնական

Նոյեմբերի 17-ին, ժամը 20.29-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Մարզայան փողոցի Նրբանցքի 1 շենքի 105-րդ բնակարանի բնակիչը վատառողջ է, չի արձագանքում հեռախոսի եւ դռան զանգերին, անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել հատուկ փրկարարական ջոկատի հերթապահ խումբը:

Մինչ փրկարարների կանչի վայր հասնելը տեղի ուժերը բացել են բնակարանի դուռը, հյուրասենյակում անօգնական վիճակում հայտնաբերել 1946 թ. ծնված Միքայել Առաքելյանին, որին շտապօգնության ավտոմեքենայով տեղափոխել են «Արմենիա» բժշկական կենտրոն:

• Նոյեմբերի 20-ին, ժամը 16.30-ին Շիրակի մարզից տեղեկություն է ստացվել, որ Գյումրիի Խաչատրյան փողոցի 38 տան բնակիչը չի արձագանքում դռան եւ հեռախոսի զանգերին, դուռը բացելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարական ջոկատը:

Փրկարարները բացել են բնակարանի դուռը եւ բնակարանում հայտնաբերել անօգնական վիճակում գտնվող (ինսուլտի նախանշաններով) 1941 թ. ծնված Թամարա Մկրտչյանին, որին ցուցաբերել են առաջին բուժօգնություն եւ հանձնել դեպքի վայր ժամանած «1-03» ծառայության աշխատակիցներին:

• Նոյեմբերի 20-ին, ժամը 17.48-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Կոմիտասի պողոտայի 54 շենքի 44-րդ բնակարանի տարեց բնակիչն ընկել է եւ չի կարողանում տեղաշարժվել, դուռը բացելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել հատուկ փրկարարական ջոկատի հերթապահ խումբը:

Փրկարարները բացել են բնակարանի դուռը, բնակարանում հայտնաբերել 1950

թ. ծնված Ի. Եղիզարյանին եւ 1932 թ. ծնված Ն. Եղիզարյանին եւ հանձնել դեպքի վայր ժամանած «1-03» ծառայության աշխատակիցներին:

Հայրնաբերվել է դի

Նոյեմբերի 19-ին, ժամը 12.45-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Կոմիտասի պողոտայի 3 շենքի 90-րդ բնակարանի բնակչուհի Գալինա Դավթյանը չի արձագանքում հեռախոսազանգերին եւ դռան թակոցներին. անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել հատուկ փրկարարական ջոկատի հերթապահ խումբը:

Փրկարարները բացել են բնակարանի դուռը եւ հյուրասենյակում հայտնաբերել 1931 թ. ծնված Գ. Դավթյանի դին:

• Նոյեմբերի 21-ին, ժամը 17.24-ին «1-03» ծառայությունից տեղեկություն է ստացվել, որ Երեւանում Զրազդանի կիրճում «8-րդ հրաշալիք» ռեստորանի մոտակայքում մարդ է ընկել ջրանցքը. անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր են մեկնել հատուկ փրկարարական ջոկատի հերթապահ եւ ԵԿԿ օպերատիվ խմբերը:

Պարզվել է, որ ջրանցքի մոտով գրոհներ իր ջրերն է ընկել 1993 թ. ծնված Արթուր Ավոյանը, որին իր ընկերները՝ 1993 թ. ծնված Ա. Խաչատրյանը եւ 1994 թ. ծնված Լ. Սաֆարյանը փորձել են օգնել, սակայն ապարդյուն:

Մինչ փրկարարների կանչի վայր հասնելը տեղի ուժերով Ա. Ավոյանի դին դուրս է բերվել ջրանցքից:

Ա. Խաչատրյանը տեղափոխվել է Երեւանի թիվ 3 հիվանդանոց, այնուհետեւ՝ թիվ 1 կլինիկական հիվանդանոց:

Առողջական վիճակը բավարար է:

• Նոյեմբերի 22-ին, ժամը 08.49-ին Շիրակի մարզից տեղեկություն է ստացվել, որ Գյումրիի «50-ամյակի» կամրջից (Ա. Մամուկյան պողոտա) մարդ է կախված. անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարական ջոկատը:

Փրկարարները կամրջից իջեցրել են շտապօգնության բրիգադին եւ հանձնել Շիրակի մարզի Ջաջուռ գյուղի բնակիչ՝ 1990 թ. ծնված Ստյոպա Ավագյանի դին:

• Նոյեմբերի 22-ին, ժամը 20.54-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Արցախի պողոտայի 4 շենքի 6-րդ բնակարանի բնակիչը չի արձագանքում հեռախոսի եւ դռան զանգերին:

Դեպքի վայր է մեկնել հատուկ փրկարարական ջոկատի հերթապահ խումբը:

Հարազատների մերկայությամբ փրկարարները բացել են բնակարանի դուռը եւ մի-

ջանցքում հայտնաբերել 1951 թ. ծնված Խանուն Մանյանի դին:

Ավտոպատահար Վանաձոր-Դիլիջան ավտոճանապարհին

Նոյեմբերի 17-ին, ժամը 10.06-ին Լոռու մարզից ահազանգ է ստացվել, որ Վանաձոր-Դիլիջան ավտոճանապարհի 9-րդ կմ-ում տեղի է ունեցել ավտոպատահար, կան տուժածներ. անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարական ջոկատը եւ մեկ մարտական հաշվարկ:

Պարզվել է, որ «MVV DEKON & AIG» ՍՊԸ-ին պատկանող «Սուզուկի» մակնիշի 944 ՕՕ 62 պետհամարանիշով ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթևեկելի մասից եւ բախվել արգելապատնեշին:

Մինչեւ փրկարարների կանչի վայր հասնելը՝ ավտոմեքենայի վարորդ՝ 1985 թ. ծնված Ռ. Գրիգորյանը տեղափոխվել է Վանաձորի թիվ 1 հիվանդանոց, որտեղ ստանալով առաջին բուժօգնություն՝ դուրս է գրվել:

Փրկարարներն ավտոմեքենայից դուրս են բերել ուղեւոր, ԱՄՆ քաղաքացի՝ 1973 թ. ծնված Պիտեր Լա Բոնբարդին:

Տուժածը ոտքի վնասվածքով տեղափոխվել է Վանաձորի թիվ 1 հիվանդանոց, նրա առողջական վիճակը բժիշկները գնահատել են ծանր:

Վրաերթ Շիրակամուր գյուղում

Նոյեմբերի 21-ին, ժամը 19.45-ին ահազանգ է ստացվել, որ Լոռու մարզի Շիրակամուր գյուղում տեղի է ունեցել ավտոպատահար (վրաերթ), կա տուժած. անհրաժեշտ է շտապօգնության բրիգադ:

Պարզվել է, որ Տավուշի մարզի Կողբ գյուղի բնակիչ Վաչագան Երկնափեշյանին պատկանող «ՁԻԼ-130» մակնիշի 25 SO 276 պետհամարանիշով բեռնատար ավտոմեքենան վրաերթի է ենթարկել 1953 թ. ծնված Գրիշա Նապիթյանին, ով տեղում մահացել է:

Մեքենան դուրս է եկել հանդիպակաց գոտի

Նոյեմբերի 17-ին, ժամը 18.14-ին ահազանգ է ստացվել, որ Սպիտակ-Երեւան ավտոմայրուղու 17-րդ կմ-ում մերկասառույցի հետեւանքով, «ՁԻԼ-131» մակնիշի 04 SS 875 պետհամարանիշով բեռնատար ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի հանդիպակաց գոտի եւ չի կարողանում տեղից շարժվել:

Ժ.18.31-ին դեպքի վայր են մեկնել «Սպիտակ ճանապարհ» ՓԲԸ-ի աշխատակիցները եւ տեխնիկան, >>>

միջազգային լուրեր

Ջրհեղեղ՝ Իրանում

Իրանի հարավարեւմտյան շրջաններում ջրհեղեղների հետեւանքով տուժել է 61 հազար քաղաքացի, զոհվել է 8 մարդ:

Ըստ երկրի Կարմիր խաչի տարածած տեղեկատվության՝ կազմակերպության աշխատակիցները փրկարարական աշխատանքներ են իրականացնում ջրհեղեղից տուժած 11 գյուղերում: Հասցված նյութական վնասի չափերը ճշտվում են:

Թայլանդում ավելանում է զոհերի թիվը

Թայլանդի ուժեղագույն ջրհեղեղի զոհերի թիվը հասել է 595-ի, երկու մարդ համարվում է անհետ կորած: Նոյեմբերի 19-ին այսպիսի տվյալներ է հրապարակել Թայլանդի բնական աղետների կամխարգելման ազգային վարչությունը:

Երկրում ջրհեղեղները դեռ շարունակվում են. ջուրը շարունակվում է մնալ թագավորության 76 նահանգներից 20-ում, այդ

թվում՝ մայրաքաղաք Բանգկոկում: Մինչ այսօր ջրհեղեղից տուժել է երեք միլիոն բնակիչ:

Ժողովրդին ուղղված հերթական կոչի ընթացքում Թայլանդի վարչապետը հավաստիացրել է, որ մայրաքաղաքի գործարար կենտրոնը ջրի տակ չի անցնի, քանի որ այդ ուղղությամբ արդյունավետ միջոցներ են ձեռնարկվել:

Հիշեցնենք, որ Թայլանդում բնական աղետն ավերածություններ է գործում հուլիսի 5-ից: Հուլիսից մինչ այսօր տարեքի հետեւանքով թագավորությունում տուժել է 11



միլիոն մարդ, շուրջ մեկ միլիոն մարդ բուժօգնության է դիմել, զրեթե 250 հազարը մնացել են անտուն: Ջրի տակ է մնացել 15 հազար փոքր եւ միջին ձեռնարկություն, գյուղատնտեսական հսկայական տարածություններ: Վնասի չափը, ըստ տարբեր գնահատականների, 10-16 միլիարդ դոլարի է հասնում:

Դեպք՝ ինքնաթիռում

Ամերիկացի Արթուր Բերկովիցը US Airways-ի չվերթով Ալյասկայից Ֆլյադելֆիա թռչելիս ստիպված է եղել թռիչքի ամբողջ ընթացքում կանգնած մնալ: Պատճառն այն էր, որ Բերկովիցի հարեւանը ճարպակալությամբ է տառապել:

Ավելի քան 180 կիլոգրամ քաշ ունեցող հարեւանը չի տեղավորվել մեկ նստարանի վրա, եւ նրա մարմնի մի մասը Բերկովիցի նստարանի վրա է եղել: Ինքնաթիռում այլ ազատ տեղ չի եղել, իսկ թռիչքը տեւել է շուրջ 7 ժամ:

Այս չվերթից հետո Բերկովիցը բողոքել է ավիաընկերությանը: Նրանից ներողություն են խնդրել եւ առաջարկել փոխհատուցել տոմսի արժեքից 200 դոլարը: Ուղեւորը չի բավարարվել, ասելով, որ ինքը տոմսի համար 800 դոլար է վճարել:

Վեճը, հավանաբար, կլուծվի դատարանում:

Բախվել է 50 ավտոմեքենա

Գերմանիայում 50-ից ավելի ավտոմեքենաների բախման հետեւանքով զոհվել է 3 մարդ, 35-ը ստացել են տարբեր վնասվածքներ: Տուժածներից 14-ը մարմնական ծանր վնասվածքներով ուղղաթիռներով տեղափոխվել է մոտակա հիվանդանոցներ:

Խոշոր վթարը տեղի է ունեցել Նոյեմբերի 19-ի գիշերը՝ Գերմանիայի արեւմուտքում գտնվող Մյունստերում ավտոճանապարհին թանձր մառախուղի պատճառով:

Մայրուղին որոշ ժամանակով փակ է եղել տրանսպորտային երթևեկության համար:





>>> որոնք ավտոմեքենան դուրս են բերել երթևեկելի հատված: Կատարվել են ճանապարհի մաքրման եւ աղալցման աշխատանքներ, ճանապարհը երթևեկելի է:

• Նոյեմբերի 18-ին ժամը 03.07-ին ահազանգ է ստացվել, որ Շիրակի մարզի Թորոսգյուղ-Աշոցք ավտոճանապարհի 6-րդ կմ-ում մարդատար ավտոբուսը դուրս է եկել ճանապարհի երթևեկելի մասից եւ թաղվել ձյան մեջ. անհրաժեշտ է օգնություն:

Դեպքի վայր են մեկնել «Աշոցքի ճանշին» ՓԲԸ-ի աշխատակիցները (տեխնիկայով), որոնք կատարել են ճանապարհի մաքրման եւ աղալցման աշխատանքներ, ճանապարհը երթևեկելի է: Գյումրիից դեպքի վայր մեկնած ավտոբուսով ուղևորները (մոտ 60 քաղաքացի) տեղափոխվել են Երեւան:

Շրջվել է ավտոմեքենա

Նոյեմբերի 22-ին, ժամը 19.00-ին Վայոց ձորի մարզից տեղեկություն է ստացվել, որ միջպետական ավտոճանապարհից դեպի Աղավնածոր տանող ճանապարհի 3-րդ կմ-ում տեղի է ունեցել ավտոպատահար:

Դեռես չպարզված հանգամանքներում «ՎԱԶ-2121» մակնիշի 17 ՕՏ 373 պետհամարանիշով ավտոմեքենան դուրս է եկել երթևեկելի մասից եւ շրջվել, ինչի հետևանքով վարորդ՝ 1968 թ. ծնված Գրիգոր Արամյանը (գյուղ Շատիկ) մարմնակազմ վնասվածքներով տեղափոխվել է Եղեգնաձորի հիվանդանոց: Ըստ բժիշկների՝ Գ. Արամյանի վիճակը բավարար է:

• Նոյեմբերի 22-ին, ժամը 23.05-ին Շիրակի մարզից ահազանգ է ստացվել, որ «ԲՄՎ» մակնիշի 02 ՍՕ 070 պետհամարանիշով ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթևեկելի մասից եւ շրջվել:

Դեպքի վայր են մեկնել 4 հրշեջ փրկարար:

Դեռես չպարզված հանգամանքներում՝ ճանապարհից դուրս շրջվել է «ԲՄՎ» մակնիշի ավտոմեքենան եւ առկա է զազի արտահոսք:

Հրշեջ-փրկարարները կանխել են ավտոմեքենայի գազաբալոնից զազի արտահոսքը եւ ավտոմեքենայից դուրս բերել վարորդ՝ 1969 թ. ծնված Ռսկան Ռսկանյանին, ուղևոր՝ 1970 թ. ծնված Արմեն Բաղդասարյանին, որոնք տեղափոխվել են Աշոցքի հիվանդանոց: Ըստ բժիշկների՝ Ռ. Ռսկանյանի առողջական վիճակը միջին ծանրության է, իսկ Ա. Բաղդասարյանինը՝ բավարար:

Ճանապարհը մաքրվել է մերկասառույցից

Նոյեմբերի 19-ին, ժամը 07.05-ին ահազանգ է ստացվել, որ Երեւան-Իջեւան ավտոճանապարհի 83-րդ կմ-ում Սեւանի ուղղանցում, մերկասառույցի հետևանքով ճանապարհը դարձել է դժվար անցանելի:

Դեպքի վայր է մեկնել Դիլիջանի «ճանշին» ՓԲԸ-ի 2 միավոր տեխնիկա:

Ճանապարհը մաքրվել է մերկասառույցից:

Շաբաթվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է տարաբնույթ հրդեհների 33 դեպք, որոնց գերակշիռ մասը տեղի է ունեցել խտածածկ տարածքներում:

Նոյեմբերի 21-ին, ժամը 05. 59-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Գ. Ավետիսյան 40 շենքի մոտակայքում այրվում է ավտոմեքենա:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Հրդեհը մարվել է ժամը 06.10-ին:

Այրվել է Լ. Խաչատրյանին պատկանող «Ջապորոժեց» մակնիշի 65 ԱԼ 990 պետհամարանիշով ավտոմեքենան:

Շնորհավորանք



Արվեստիկ Վարազդատի Չիլինգարյանը ծնվել է 29.11.1961 թ.՝ ԼՂՀ Գետաշեն գյուղում: Միջ-

նակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երեւանի թիվ 1 բժշկական ուսումնարան, որից հետո աշխատել է Երեւանի 8-րդ բուժմիավորման վերակենդանացման բաժանմունքում որպես անեսթեզիստ, ՀՀ ոստիկանության հոսպիտալի թերապեւտիկ բաժանմունքում՝ ավագ բուժբույր:

1997 թ. Արագ արձագանքման փրկարար ջոկատի ստեղծման օրվանից աշխատել է որպես բուժակ, քաղաքաշտպանության գնդում՝ դեղատան պետ: Գունդը լուծարվելուց հետո տեղափոխվել է ԱԻՆ հատուկ փրկարար ջոկատ՝ որպես 4-րդ փրկարարական խմբի պարամեդիկ:

Ջոկատի ստեղծման օրվանից մինչ այսօր աշխատում է մեր համակարգում, մասնակցել է տարբեր միջազգային միջոցառումների, ուսումնավարժությունների եւ դասընթացների, որոնողափրկարարական եւ վթարափրկարարական աշխատանքների: Վայելում է անձնակազմի սերն ու հարգանքը:

Հատուկ փրկարար ջոկատի անձնակազմում է Արվեստիկին՝ ծննդյան 50-ամյակի առթիվ եւ մաղթում առողջություն ու երկար տարիների կյանք:

Հատուկ փրկարար ջոկատի անձնակազմ

սեյսմիկ պաշտպանություն

Ս.թ. նոյեմբերի 17-ից 23-ը ՄՊԱԾ-ի դիտացանցը Հայաստանի Հանրապետության տարածքում 3 բալից ավելի ուժգնությամբ գրանցել է մեկ զգալի երկրաշարժ: Այն տեղի է ունեցել նոյեմբերի 21-ին Աշտարակ քաղաքից 4 կմ հյուսիս-արեւմուտք, իսկ ուժգնությունն էպիկենտրոնային գոտում կազմել է 4 բալ: Մայրաքաղաքում զգացվել է 3 բալ ուժգնությամբ:

Տարածաշրջանում. 3 բալ եւ ավելի ուժգնությամբ գրանցվել է 203 երկրաշարժ, որից 195-ը Թուրքիայի արեւելքում՝ Վան քաղաքի շրջանում: Նոյեմբերի 17-ին 4 բալ ուժգնությամբ 2 ստորգետնյա ցնցում է տեղի ունեցել Իրանի տարածքում՝ Մարանդ քաղաքից 28 կմ եւ Խոյ քաղաքից 48 կմ դեպի հյուսիս-արեւմուտք: Հաջորդ օրը Թուրքիայի Կարս քաղաքից 24 կմ հարավ-արեւելք գտնվող էպիկենտրոնով երկրաշարժի ուժգնությունը 3-4 բալ էր: Այդ օրը մույն էպիկենտրոնային գոտում հետեւել է 3 բալանոց ստորգետնյա ցնցում: Նոյեմբերի 19-ին մույն ուժգնությամբ սեյսմիկ իրադարձություն է գրանցվել Վրաստանի Հիրսա քաղաքից 5 կմ հարավ: Այդ օրը Հայաստան-Ադրբեջան սահմանային գոտում՝ Վարդենիս քաղաքից 19 կմ հյուսիս-արեւելք, տեղի է ունեցել 3-4 բալ ուժգնությամբ երկրաշարժ, որին հաջորդ օրը հետեւել է 3 բալանոց ստորգետնյա ցնցում: Նոյեմբերի 21-ին 3-4 բալ ուժգնությամբ երկրաշարժ է գրանցվել

Ադրբեջանի Գյանջա քաղաքից 31 կմ հարավ:

Պահպանվում է սեյսմիկ ակտիվությունը Թուրքիայի արեւելյան հատվածում: Անցած շաբաթ գրանցվել է 195 հետցնցում, որից մեկը՝ 7 բալ ուժգնությամբ (5.0 մագնիտուդ): Երկրաշարժը տեղի է ունեցել նոյեմբերի 18-ին Վան քաղաքից 69 կմ հյուսիս-արեւելք: Ստորգետնյա ցնցումները թույլ զգացվել են Երեւանում (3 բալ):

Տարածաշրջանից դուրս. 6.0 եւ ավելի մագնիտուդով գրանցվել է երեք ուժեղ երկրաշարժ: Նոյեմբերի 18-ին Նոր Ջեյհանիայի Հյուսիսային կղզու արեւելյան ափամերձ գոտում տեղի է ունեցել 6.0 մագնիտուդով երկրաշարժ, որն ունեցել է 2 նախացնցում՝ 5.2 եւ 5.7 մագնիտուդերով: Նոյեմբերի 22-ին Բոլիվիայի հյուսիս-արեւելքում՝ Տրինիդադ քաղաքից 60 կմ հարավ-արեւմուտք գտնվող էպիկենտրոնով երկրաշարժն ունեցել է 6.6 մագնիտուդ: Ստորգետնյա ցնցումները զգացվել են խոշոր քաղաքներ Կոչաբամբեում եւ Լա-Պասում, նաեւ հարեւան պետություններում՝ Չիլիում եւ Պերուում: Անվտանգությունն ապահովվում է Լա-Պասի որոշ վարչական շենքերից տարհանում է կատարվել: Նոյեմբերի 23-ին ճապոնական Հոնսյու կղզու արեւելյան ափամերձ գոտում դարձյալ ուժեղ երկրաշարժ է գրանցվել, որն ունեցել է 6.1 մագնիտուդ, տուժածներ եւ ավերածություններ չկան:

ԱԻՆ ՄՊԱԾ գործակալություն

եղանակի տեսություն

Առաջիկա 5 օրվա եղանակի կանխատեսում

Հանրապետության տարածքում նոյեմբերի 25-ին արեւելյան շրջաններում, 27-ին եւ 28-ին՝ առանձին շրջաններում սպասվում է ձյուն: 26-ին եւ 29-ին սպասվում է առանց տեղումների եղանակ: Քամին՝ հյուսիս-արեւելյան՝ 2-7 մ/վրկ: Օդի ջերմաստիճանը 25-ին եւ 26-ին գիշերը աստիճանաբար կնվազի 8-10, 27-ին եւ 28-ին գիշերը կբարձրանա 5-6 աստիճանով:

Օդի ջերմաստիճանը նոյեմբերի 25-ին գիշերը կտատանվի լեռնային շրջաններում՝ -11... -16, Տավուշում՝ -3... -8, Լոռիում՝ -8... -13, Արագածոտնի նախալեռներում՝ -1... -6, Արարատյան դաշտում՝ -3... -6, Սյունիքի հովիտներում՝ -2... -7, Սյունիքի նախալեռներում՝ -5... -10, Ար-

ցախում՝ 0... -3 աստիճանի սահմաններում:

Օդի ջերմաստիճանը նոյեմբերի 25-ին ցերեկը կտատանվի լեռնային շրջաններում՝ -2... -7, Տավուշում՝ -2... +2, Լոռիում՝ 0... -5, Արագածոտնի նախալեռներում՝ 0... +4, Արարատյան դաշտում՝ +1... +5, Սյունիքի հովիտներում՝ +1... +5, Սյունիքի նախալեռներում՝ -4... +1, Արցախում՝ +1... +4 աստիճանի սահմաններում:

Երեւանում նոյեմբերի 25-ին, 26-ին եւ 29-ին սպասվում է առանց տեղումների եղանակ: 27-ին եւ 28-ին հնարավոր է թույլ ձյուն:

Օդի ջերմաստիճանը նոյեմբերի 25-ին գիշերը կտատանվի -4... -6, ցերեկը՝ +2... +4 աստիճանի սահմաններում:



«Էլիտ գրուպ». կյանքի նոր որակ



Սեյսմակայուն էլիտար շինարարության առաջատարը տարածաշրջանում

E-mail: info@elitegroup.am; URL: www.elitegroup.am

Հակասեյսմիկ համակարգերի միջազգային ասոցիացիայի անդամ «Էլիտ Գրուպ» ընկերությունը տարածաշրջանի առաջատարն է սեյսմակայուն շինարարության ոլորտում:

Առաջին անգամ Հայաստանում «Էլիտ Գրուպ» շենքերում սկսեցին կիրառել ռետինամետաղյա շերտավոր բարձիկներ, որոնցով երկնաքերներ են կառուցում ճապոնիայում, ԱՄՆ-ում, Չինաստանում եւ այլուր:

«Էլիտ Գրուպ» միակ ընկերությունն է Հայաստանում, որն արժանացել է միջազգային հեղինակավոր վկայականների՝ կառավարման, աշխատանքի պաշտպանության եւ անվտանգության ոլորտներում:

«Էլիտ Գրուպ» բնակելի, առևտրային, առողջարանային ու հյուրանոցային համալիրներ, ամբողջական թաղամասեր, տարածաշրջանային ծրագրեր, տեղական ու միջազգային հեղինակավոր ու հուսալի գործընկերներ:

Ճիշտ կառավարումը գիտություն է, իսկ «Էլիտ Գրուպ» կառավարվում է գիտնականների կողմից:

Երեւան, Պուշկինի 21, ☎ 56-69-22, 56-69-33:



Բնապահպանություն

Կլիմայի փոփոխություն

ՄԱԿ-ն ահազանգում է

Տեղեկանք

Գիտնականները պնդում են, որ մոլորակի ջերմաստիճանն արագացված տեմպերով աճում է մարդկային գործունի պատճառով: Երկրի կլիմայի փոփոխությունն արագացնում են գլոբալ տաքացում, որը կհանգեցնի ծովի մակարդակի բարձրացման և եղանակային երևույթների առավել ծայրահեղ դրսևորումների՝ ներառյալ երաշտները, ջրհեղեղները ու փոթորիկները:

Եղանակի և կլիմայի ավելացող վտանգներն ավելի են մեծացնում աղետների ռիսկն ու վտանգում սննդի ու ջրի մատակարարումն ամբողջ աշխարհում՝ հատկապես աղքատ երկրներում: Ամբողջ համայնքներ ստիպված են լինում նոր տուն գտնել, քանի որ իրենց շրջակա միջավայրը կործանվել է և կյանքի համար պիտանի չէ:



Կլիմայի փոփոխության հետևանքով առաջացած աղետների ազդեցությունը կրած մարդկանց թիվը շարունակում է աճել:

Աղքատներն ամենախոցելի են և օգնության կարիք ունեն:

Գլոբալ կլիմայի նոր համաձայնագրի վերաբերյալ բանակցությունները շատ փոքր արդյունք տվեցին:

Աղետների միջազգային տվյալների բազայի վիճակագրությունը ցույց է տալիս, որ աճում են եղանակով պայմանավորված աղետներն ու դրանց հետևանքները կրող մարդկանց թիվը շարունակում է աճել՝ 20-րդ դարի կեսերից:

ՄԱԿ-ի Կլիմայական խնդիրներով զբաղվող հանձնաժողովն ասում է, որ աշխարհը պետք է սպասի ավելի սաստիկ երաշտների ու տապի, ավելի հորդառատ ամձրեւների, ավելի ուժեղ փոթորիկների և ծովի մակարդակի բարձրացման՝ ջերմոցային գազերի արտանետումների պատճառով սկսված գլոբալ տաքացման շնորհիվ:

Աֆրիկյան, Լատինական Ամերիկյան և Ասիայի որոշ հատվածներ, որտեղ կլիման արդեն ծայրահեղ դրսևորումներ ունի և չոր կլիման սովորական երևույթ է, ավելի շատ կկրեն փոփոխության ազդեցությունը, քանի որ անձրեւներն ավելի քիչ կլինեն:

Ափամերձ շրջաններում և

փոքր կղզի-պետություններում տասնյակ միլիոնավոր մարդիկ տեղահան կլինեն, քանի որ կենսամիջավայրը կկործանվի կամ սնունդն ու ջուրը չեն բավարարի: Սպասվում է, որ մարդու, բույսերի և կենդանիների հիվանդությունները նույնպես կտարածվեն, քանի որ մոլորակը տաքանում է:

Աճում են մտահոգությունները տեղական, տարածաշրջանային և գլոբալ անվտանգության վրա կլիմայի փոփոխության հնարավոր ազդեցության մասին: Փորձագետները զգուշացնում են, որ մեծանում է բռնությունների ռիսկն այնտեղ, որտեղ կլիմայի փոփոխության առաջացրած լարվածությունները կգումարվեն առկա սթրեսներին:

Ակտիվ քննարկումներ են ընթանում և բազմաթիվ հակադիր գաղափարներ կան, թե ինչպես

պետք է վերահսկել գլոբալ տաքացումը և օգնել մարդկանց հարմարվել դրա հետևանքներին:

Շատ զարգացող երկրներ կարծում են, որ ավելի հարուստ պետությունները պետք է ավելի լուրջ ջանքեր գործադրեն՝ իրենց ածխածնի արտանետումները կրճատելու համար և լրացուցիչ ֆինանսավորում տրամադրեն աղքատ երկրներին՝ հարմարվելու գլոբալ տաքացման հետևանքներին և զարգացման այնպիսի ուղիներ գտնեն, որոնք ածխածնի ավելի քիչ արտանետումներ կապահովեն: Հարց է բերվում, որտեղ և որ արագ զարգացող երկրները համաձայնեն նվազեցնել իրենց ածուղ արտանետումները:

Ավելի քան 190 երկիր համաձայնել է բանակցել նոր պայմանագրի ստեղծման շուրջ, որը կփոխարինի Կյոտոյի արձանագրությանը: Այն ստիպում է հարուստ երկրներին, բացի ԱՄՆ-ից, սահմանափակել ջերմոցային գազերի արտանետումները մինչև 2012 թվականը:

Սակայն 2009 թվականին Կոպենհագենի գագաթնաժողովին այդ հույսերն ի դերեւ ելան, և հանդիպումն ավարտվեց առանց սահմանափակումներն ընդունելու, որոնց նպատակն էր նաեւ նվազեցնել ջերմաստիճանի բարձրացումն ու նյութական միջոցներ ուղղել աղքատ երկրներին:

Միլիոնավոր երեխաներ կտուժեն

Սպասվում է, որ կլիմայի փոփոխությունը ավելի կվատացնի Արեւելյան Ասիայի և Խաղաղօվկիանոսյան ավազանի երկրներում ապրող միլիոնավոր երեխաների վիճակը, որոնք առանց այդ էլ տառապում են սնունդի ու մաքուր ջրի պակասից և խոցելի են հիվանդությունների նկատմամբ, հայտնում է ՅՈՒՆԵՍԿ-ը:

«Բարձր ջերմաստիճանն ուղեկցվում է թերսնման, խլեբայի, դիարեայի, տենդի ու մալարիայի հետ՝ երեխաների համար այս հիվանդությունների դեմ պայքարում ստեղծելով լրացուցիչ ռիսկեր և հանգեցվելով բարդությունների»:

Գումարած դրան, քանի որ կլիմայի փոփոխությունն ազդում է ընտանիքների կենսակերպի վրա՝ հատկապես ֆերմերների, որոշ ծնողներ իրենց երեխաներին հանում են դպրոցներից, որ-

պեսզի նրանք օգնեն ջուր և վառելիք հավաքել և իրենց ներդրումն ունենալ ընտանեկան բյուջեում:

Գիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ խոցելիությունը՝ կլիմայի փոփոխությանը զուգահեռ, միայն խորանալու է: Այդ հետազոտություններն իրականացվել են Ինդոնեզիայում, Կիրիբատիում, Մոնղոլիայում, Ֆիլիպիններում և Վանուատուում:

Արեւելյան Ասիայի և Խաղաղօվկիանոսյան ավազանի երկրներում ապրում է աշխարհի բնակչության մեկ երրորդը կամ՝ մոտ 2 միլիարդ մարդ, ինչպես նաեւ աշխարհի երեխաների 25 տոկոսը՝ մոտ 580 միլիոն: ՅՈՒՆԵՍԿ-ի տվյալների համաձայն, տարածաշրջանում չորս երեխայից մեկը հյուսված է թերսնման պատճառով:

Այստեղ երեխաներն արդեն կրում են կլիմայի փոփոխության ազդեցությունը. ծովի մակարդակի բարձրացման վտանգը Խաղաղօվկիանոսյան կղզիներում, լայնածավալ ջրհեղեղները Ֆիլիպիններում և վատ բերքն Ինդոնեզիայում:

Ասիայի խաղաղօվկիանոսյան շրջանը նաեւ աշխարհի ամենաաղետաշատ հատվածն է և աղետներից ամենաշատ զոհերն այստեղ են գրանցվում:

1975-2008 թվականներին Ասիայում կենտրոնացած էր աշխարհում աղետներից տուժածների 88 տոկոսը, զոհերի 61 տոկոսը և տնտեսական վնասի 47 տոկոսը:

Կլիմայի փոփոխության հետևանքով մեծանում է նաեւ ընդհանուր առմամբ բնական վտանգների ազդեցությունը կրող երեխաների թիվը՝ 1990-ականների տարեկան 66,5 միլիոնից 175 միլիոն՝ հաջորդ տասնամյակում:

Ձեկույցն ասում է, որ կլիմայի փոփոխությանը հարմարվելուն միտված գործողություններում պետք է հաշվի առնվեն երեխաների կարիքները, և երկրներն ու ակտիվիստները պետք է վերահսկեն երեխաների «հսկայական ստեղծագործական» ռեսուրսը՝ կլիմայի փոփոխության դեմ պայքարելու համար:

Թին Լեյ Վին
Բանգկոկ, AlertNet

Սովորեցին 70-80 տեսակի վիրակապ դնել

Նոյեմբերի 2-ին Երեւանի պետական բժշկական քոլեջում՝ համաձայն Երեւանի քաղաքապետարանի Առողջապահության վարչության կողմից հաստատված՝ Երեւան քաղաքի բնակչության պաշտպանության նախապատրաստման 2011 թ. հիմնական միջոցառումների պլանի, անցկացվեց վարժանք՝ «Հակառակորդի օդուժի հանկարծակի հարձակման ժամանակ Երեւանի բժշկական կենտրոնի և ԷՊԲԲ-ի աշխատողների, հիվանդների և ուսանողների պաշտպանության կազմակերպումն ու իրականացումը» թեմայով:

Այն կազմակերպվել էր քոլեջի քաղաքապաշտպանության շտաբի պետ, ռազմագիտության և աղետների ժամանակ առաջին բուժօգնության դասախոս, փոխգնդապետ Համլետ Հովհաննիսյանի աջակցությամբ:

Վարժանքին ակտիվորեն մասնակցել են քոլեջի ուսանողները, որոնք սովորել են 70-80 տեսակի վիրակապ դնել: Սցենարի համաձայն, նրանք առաջին նախաբժշկական օգնություն են ցուցաբերել փլատակներից դուրս բերված տուժածներին, իսկ հետագա բուժումը շարունակվել է արդեն հիվանդանոցի ներսում՝ բժշկական կենտրոնի վարժանքին մասնակցող 30 տարբեր մասնագետների կողմից:

Առաջին նախաբժշկական օգնության գրագետ կազմակերպումը կարող է որոշիչ նշանա-



կություն ունենալ աղետների առաջին ժամերին, այդ պատճառով էլ այս թեմայով վարժանքների կազմակերպմանը լուրջ նշանակություն է տրվում: Նման մի վարժանք էլ ուսանողների համար կազմակերպվել էր Անկախության օրվա կապակցությամբ՝ Մանկական այգում, որին ներկա

էին մասնակիցներ Երեւանի բոլոր բուժմիավորումներից: Վարժանքին հետեւել էր նաեւ ՀՀ Առողջապահության նախարար Հարություն Քուչկյանը: Մասնակիցները հաջողությամբ կատարել էին բոլոր առաջադրանքներն ու գերազանց գնահատական ստացել:



մասնագետի անկյուն

Երկրաշարժավրանգ տարածքներում չի կարելի ապումակայաններ կառուցել

IDN-InDepthNews եւ China Daily
Գյութերի հիման վրա

Այսպիսի կարծիք է հայտնել միջազգային փորձագետների խումբը, որը լրացուցիչ ուսումնասիրություններ է իրականացրել Ֆուկուշիմայի միջուկային աղետից հետո:

Նորվեգիայի, Ավստրիայի, Իսպանիայի եւ Միացյալ Նահանգների գիտնականները հստակ ապացույցներ ունեն, որ 9 մագնիտուդով աննախադեպ երկրաշարժը «կառուցվածքային ավերածություն» է գործել Ֆուկուշիմա Դեպոզիտի ատոմակայանում, որի հետեւանքով տեղի է ունեցել ռադիոակտիվ քսենոն գազի արտանետում՝ մինչ վրա հասած ցունամիի ալիքը:

Ուսումնասիրությունները ցույց են տվել նաեւ, որ ռադիոակտիվ ճառագայթումը տեւել է ավելի երկար, քան ենթադրվում էր եւ, հետեւաբար, ռադիոակտիվության ավելի բարձր մակարդակ է եղել, քան նշված է մախորդ գնահատականներում:

Դր. Անդրեաս Շտոլը՝ օդի հետազոտման նորվեգական ինստիտուտից, որը գլխավորել է փորձագետների խումբը, ասում է.


«Մեր հաշվարկները հիմնված են ռադիոակտիվության ավելի քան 1000 չափումների վրա: Դա մինչ այժմ անցկացրած ամենահամապարփակ հետազոտությունն է: Ռադիոակտիվ ճառագայթումը կազմել է 16 700 պետա-բեկերել (1 բեկերելը՝ մեկ վայրկյանում 1 ռադիոակտիվ քայքայումն է, իսկ պետա-բեկերելը հավասար է 1015 բեկերելի): Սա, չիաշված առումային ռումբի փորձարկումները, իներտ գազի ամենամեծ արտանետումն է, որը 2,5 անգամ գերազանցում է Չեռնոբիլում տեղի ունեցած իներտ գազի արտանետումը:

Միավորը կոչվել է ֆրանսիացի ֆիզիկոս Անրի Բեկերելի անունով, ով 1903 թ. Պիեռ եւ Մարի Կյուրիների հետ միասին Նոբելյան մրցանակ է ստացել ռադիոակտիվությունը հայտնաբերելու համար:

Ռադիոակտիվ ճառագայթումն սկսվել է մարտի 11-ին ժամը 15:00-ի սահմաններում, այսինքն՝ մինչեւ ծովափնյա ատոմակայանին ցունամիի հարվածելը: Ստացվում է, որ 14:46-ին գրանցված երկրաշարժի հետեւանքով տեղի է ունեցել կառուցվածքային ավերածություն: Ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ ատոմային արդյունաբերության, ճապոնական կառավարության եւ ռեակտորի անվտանգության գերմանական հանձնաժողովի պնդումները, որ ինքը՝ երկրաշարժը չի հանդիսացել ռադիոակտիվ աղետի պատճառ, չի համապատասխանում իրականությանը: Ատոմային ռեակտորների համար երկրաշարժերի վտանգն իրականություն է: Միջուկային կազմակերպությունների լրբերի փորձերն ակնհայտորեն ձախողվեցին՝ այս վերջին հետազոտության հրապարակման շնորհիվ:

Եղանակի բարենպաստ պայմանները՝ գերակայող արեւմտյան քամին եւ քիչ տեղումները, հանգեցրին նրան, որ ցեզիում 137-ը միայն 20 տոկոսով աղտոտեց Գապոնիայի ցամաքը: Ցեզիումի արտանետումները, որոնք սկսվել էին մարտի 12-ին, առաջին բլոկում ջրածնի պայթյունից հետո, շարունակվեցին մարտի 14-ին եւ 15-ին, իսկ առավել մեծ ռադիոակտիվ ֆոնը գրանցվեց մարտի 16-ին եւ 19-ին հետագայում նվազելով չորրորդ բլոկում օգտագործված վառելիքի ավազանի սառեցման վերսկսումից հետո:

Բարեբախտաբար, Տոկիոն՝ իր 36 միլիոն բնակիչներով, խուսափեց վատթարագույնից, քանզի մայրաքաղաքի վրայով ռադիոակտիվ ճառագայթման առավել խիտ մասի անցնելու պահին Տոկիոյում տեղումներ չեղան: Մյուս կողմից, ռադիոակտիվ աղտոտումը տարածվեց ատոմակայանից հյուսիս գտնվող շրջանից մինչեւ հարավային Օսակա քաղաքը: Նախկին վարչապետ Նաոտո Կանը վերջերս բնութագրեց այդ ժամանակ ստեղծված իրավիճակն այն աստիճան աղետալի, որ կառավարությունը քննարկում էր Տոկիոյի տարիանման հարցը՝ ինչը ենթադրում էր Տոկիոյում արտակարգ իրավիճակ հայտարարելը: Այդ դեպքում, ըստ Կանի, հարցականի տակ էր ճապոնիայի, որպես պետություն, գոյատևումը:



Ճապոնիան դասեր է քաղում աղետներից

Այն բանից հետո, երբ 1995 թ. հունվարի 17-ին Կոբե քաղաքում երկիրը ցնցվեց 7.3 մագնիտուդով երկրաշարժից, որին զոհ գնաց 6434 մարդ եւ փլուզվեց 10 496 շենք, ճապոնիայում սկսեցին համախմբել տեղական բնակչությանը՝ իրենց համայնքները պաշտպանելու համար: Յուրաքանչյուր քաղաք, շրջան, գյուղ ձեռնամուխ եղավ աղետների կանխարգելման համայնքային կազմակերպություն ստեղծելուն:

Այդ կազմակերպությունները համայնքի բնակիչների համար կազմակերպում են անվտանգության ու տարիանման, ինչպես նաեւ աղետից տուժածներին առաջին օգնություն ցուցաբերելու ուսումնավարժանքներ:

Ճապոնիայի աղետավտանգ Նիիգատա պրեֆեկտուրան ավելի քան 4500 այդպիսի կազմակերպություն ունի, որոնցից յուրաքանչյուրն ընդգրկում է ավելի քան 100 ընտանիք՝ համարյա բոլոր 30 քաղաքներում եւ գյուղերում:

Ամեն տարի յուրաքանչյուր կազմակերպություն կառավարությունից 800 000 իեն (10 500 դոլար) է ստանում՝ իր ընթացիկ ծախսերը հոգալու եւ սարքավորումներ ձեռք բերելու համար, - ասում է Նիիգատա պրեֆեկտուրայի աղետների կանխարգելման բյուրոյի տնօրեն Կացուե Ինոման:

Վերջին 10 տարվա ընթացքում Նիիգատան դիմակայել է մի քանի հզոր բնական աղետների: 6.8 մագնիտուդով երկրաշարժ տեղի ունեցավ 2004 թ. հոկտեմբերին այն բանից հետո, երբ դրանից 3 ամիս առաջ անձրեւային փոթորիկը ջրհեղեղ էր առաջացրել: 2007 թվականին 6.8 մագնիտուդով երկրաշարժը շրջանում 15 հոգու մահվան պատճառ դարձավ:

ձավ: Դրանց հաջորդեցին ուժեղ ձնաքերն ու անձրեւային փոթորիկները:

Մենք դասեր քաղեցինք այդ աղետներից, ինչը շատ կարեւոր էր հատկապես տեղաբնակների, համայնքների, ձեռնարկությունների եւ կառավարական մարմինների համար՝ ձեռնարկելու կանխարգելիչ միջազգային եւ համախմբելու բոլոր շահառուների ջանքերը՝ դիմակայելու աղետին, - ասում է Նիիգատայի աղետների կանխարգելման բյուրոյի անդամ Սատորու Ակեման:

2009 թ. պրեֆեկտուրան 1.5 միլիարդ իեն (20 միլիոն դոլար) ծախսեց ճգնաժամային կառավարման կենտրոն կառուցելու համար: Իրական ժամանակում տեղեկատվությունը հավաքագրվում է հիմնական ճանապարհներին, պատվարներին, պատնեշներին ու բնակելի վայրերում տեղադրված 500 տեսախցիկներից ու փոխանցվում ԵԿԿ: Կենտրոնն ունի նաեւ ուսուցողական նպատակներ. կազմակերպում է դպրոցականների եւ ուսանողների այցելություններ՝ բարձրացնելով իրագրվածություն մակարդակը:

Նույնանման ուսուցում իրականացվում է նաեւ ճապոնիայի այլ պրեֆեկտուրաներում: Տոկիոն ունի երկրաշարժի յոթ թանգարան: 2002 թվականին իր բացման օրից Մեգուրոյում այդպիսի թանգարան տարեկան այցելում է շուրջ 15 000 մարդ: Այցելության ընթացքում մարդիկ սովորում են ինչպես պաշտպանվել երկրաշարժից եւ օգնել մյուսներին: Նրանք մասնակցում են երկրաշարժի սիմուլյացիոն վարժանքներին եւ սովորում են, ինչպես օգտագործել կրկնարիչն ու գտնել պատսպարման մոտակա վայրը:

2011 թ. մարտի 11-ի երկրաշարժից հետո ճապոնիան մեծ աջակցություն ստացավ Չինաստանից: Այժմ ճապոնական կառավարությունն ուսումնասիրում է 2008 թ. Սիչուանի շրջանում տեղի ունեցած Վենչուանի երկրաշարժից հետո աղետի գոտու վերակառուցման չինական փորձը:

Հայկ Հակոբյան
ԱԻՆ արտաքին կապերի վարչություն

70-ականների ԱՄՆ-ի բնապահպանական ճգնաժամը

1960-ականների վերջերին ԱՄՆ-ի տնտեսական զարգացումն սկսեց լուրջ ազդեցություն թողնել շրջակա միջավայրի վրա, եւ բնակիչներն անհանգստացան: 1971 թվականի սկզբին Շրջակա միջավայրի պաշտպանության նոր կոմիտեն (EPA) վավերագրական լուսանկարչության լայնածավալ արշավ կազմակերպեց՝ DOCUMERICA անունով, որպեսզի գրանցի այդ փոփոխությունները: Ավելի քան 100 լուսանկարիչ մասնակցեց ոչ միայն շրջակա միջավայրի խնդիրները պարտկերելու, այլեւ առօրյա կյանքի լուսանկարներ անելու ծրագրին, որի նպատակն էր ցույց տալ, թե ինչպես ենք մենք գործակցում բնության հետ: 1974 թվականին արդեն 80 հազար լուսանկար էր արվել: Ազգային արխիվը հրապարակեց դրանցից 15 հազարը:

ժխի մեջ, Քլիվլենդ, Օհայո, 1973 (Frank J. Aleksandrowicz/NARA)

3. Նավթի հին տակառները գործարանի տարածքում, Բաթոն Ռուժ. Լուիզիանա, 1972 (John Messina/NARA)

4. Շինարարական Ներքին Մանիթոնում, Նյու Յորք, 1973 (Wil Blanche/NARA)

5. Սնոգն ու գազը՝ ավտոմեքենաների օգտագործված ակումուլյատորներից, Ղյուսթոն, Տեխաս, 1972 (Marc St. Gil/NARA)



1. Աղջիկներից մեկը՝ չդիմանալով ինքնաթիռի հռնդունին, փակել է ականջները, Վաշինգտոն, 1973 (John Neubaer/NARA)

2. Փողոցը կորել է արդյունաբերական



Երեխաների համար

Կենսապահովման հիմունքներ

Արտակարգ իրավիճակների հանրագիտարան կամ անվտանգության դպրոց

Տան վրանգները

Ի՞նչը կարող է տանը վտանգավոր լինել... Որքան էլ տարօրինակ թվա՝ հատկապես տանն է պատահում դժբախտ դեպքերի մեծ մասը: Գնաց բնակարաններում են մեզ դարանակալում տարբեր «թակարդներ», որոնց աշխարհում ամեն օր զոհ են դառնում տասնյակ հազարավոր մարդիկ: Աշխատիր չլինել նրանցից մեկը:

Գիտատեխնիկական առաջընթացն էապես փոխեց եւ հեշտացրեց մեր կենցաղավարումը, բարելավեց կյանքի պայմանները: Բայց այդ նույն «գիտատեխնիկական առաջընթացը» նաեւ պահանջում է, որ սովորենք ու իմանանք նոր տեխնիկայի եւ կենցաղային սարքերի կիրառման անվտանգության կանոնները եւ խստորեն պահպանենք դրանք: Այլապես գիտատեխնիկական առաջընթացը պատուհաս կդառնա մեր գլխին: Որ այդպես չլինի՝ քննարկենք տանը մեզ դարանած հնարավոր վտանգների պատճառները եւ տարբեր իրավիճակներում դրանց կանխարգելման միջոցները:

Ախր, պատճառները սովորական են՝ անզգուշություն, ցրվածություն, կենցաղային տեխնիկայի նկատմամբ թեթևամիտ վերաբերմունք: Կան մարդիկ, որ դաս չեն քաղում նույնիսկ սեփական սխալներից:

Տանը կենցաղային պատահարների մեծ մասն առաջանում է.

- պատահաբար վայր ընկնելուց.
 - էլեկտրական հոսանքով էլեկտրահարվելուց.
 - գազից եւ այլ նյութերից թունավորվելուց.
 - խոհանոցային կտրող առարկաների հետ անզգուշ վարվելուց.
 - նաեւ տանը եղած զենքի հետ անզգուշ վարվելուց:
- Հիմա խոսենք տանը դարանած վտանգների մասին առանձին-առանձին:

Սուր կտրող-ծակող առարկաներ

Խոհանոցում օգտագործվում են դանակներ, պատառաքաղներ, մսաղացներ, այլ սուր կտրող-ծակող առարկաներ, որոնք փոքրիկ անզգուշության դեպքում՝ տեղով վտանգ են: Ո՞վ զոհն է մեկ անգամ դանակով չի կտրել ձեռքը: Եւ որպեսզի ձեռուտ կտրտելը սովորույթ չդառնա՝ պետք է հիշել ու պահպանել մի քանի պարզ կանոն.

- չի կարելի խաղալ սուր կտրող-ծակող առարկաներով, քանի որ դրանք կարող են վնասվածքի պատճառ դառնալ.
- նման բոլոր առարկաները (դանակ, մկրատ, ասեղ, քորոց, պատառաքաղ, կոճգամ եւ այլն) պետք է գտնվեն իրենց տեղում.
- եթե գտել եք սուր կտրող-ծակող առարկաներ՝ պետք է դրանք հանձնել մեծահասակներ-



րին կամ դնել մի ապահով, անվտանգ տեղ: Տան կարգուկանոնը ոչ միայն գեղեցկության եւ մաքրության համար է, այլեւ՝ անվտանգության.

• երբ հաց, երշիկ կամ այլ մթերք եք կտրատում ուշադրությունը մի՛ շեղեք այլ բաների վրա.

• մի՛ փորձեք կտրատել սառեցրած մթերք, սպասեք մինչեւ այն հալվի:

• ապակյա սպասքի, դարակների, հայելիների հետ գործ ունենալիս հիշեք, որ դրանք փխրուն են ու հեշտ կտրվող: Ապակուց ստացած վերքերն ավելի ցավոտ են եւ ուշ են լավանում.

Իսկ եթե, այնուամենայնիվ, վնասել եք ձեզ՝ ոչ մի դեպքում վերքին չդիպեք կեղտոտ ձեռքերով: Վերքի չորսբոլորը մշակեք յոդով եւ վիրակապեք:

Էլեկտրասարքեր

Էլեկտրականությունը մեր կենցաղ է մտել 19-րդ դարի վերջում: Մինչ այդ փողոցները լուսավորվում էին նավթի ճրագներով, բնակարանները՝ յուղի ճրագներով կամ մոմերով: Մարդուն վաղուց չի զարմացնում «էլեկտրականությունը» բառը: Աջքներս բացել ու տեսել ենք՝ հեռուստացույց, սառնարան, լվացքի մեքենա, արդուկ, լուսամփոփ: Այսօր էլեկտրաէներգիան մեր կենցաղում ամենահավատարիմ օգնականն է, ու դժվար է պատկերացնել կյանքն առանց էլեկտրականության:

Բնակարաններում կան բազմաթիվ էլեկտրասարքեր: Առավտից երեկո մեր հաշվիչը պտտվում է, քանի որ վառել ենք լույսը, միացրել հեռուստացույցը, էլեկտրասալիկների վրա ճաշ ենք եփում, աշխատում ենք համակարգիչով եւ այլն: Բայց դրանք կարող են նաեւ առողջությանը մեծ վնաս հասցնել, եթե չպահպանենք անվտանգության տարրական կանոնները:

Բոլոր էլեկտրասարքերը վտանգավոր են ոչ միայն էլեկտրահարելու իրենց կարողությամբ, այլեւ անփութությունը պատժելու եւ տանը հրդեհ առաջացնելու խստությամբ:

Էլեկտրահարումը, կամ ինչպես ասում են՝ հոսանքահարումն, առաջանում է, երբ նույնիսկ մեկ ակնթարթ դիպչում ես բաց հաղորդալարին կամ ան-

սարք վարդակին:

Այդ պատճառով երեխաները պետք է իմանան էլեկտրական սարքավորումներից օգտվելու անվտանգության կանոնները.

• օգտվիր միայն այն էլեկտրասարքավորումներից, որոնցից թույլ են տվել օգտվելու ծնողներդ.

• միշտ պահպանիր էլեկտրասարքավորումները ցանցին միացնելու կարգը: Լարը սկզբում պետք է միացնել սարքին, այնուհետեւ՝ ցանցին: Իսկ անջատելիս՝ հակառակը, սկզբում անջատել ցանցից, հետո սարքից.

• մի՛ փորձիր ինքնուրույն նորոգել անսարք էլեկտրասարքավորումը, առավել եւս, եթե այն անջատված չէ հոսանքից.

• չի՛ կարելի մոտենալ կամ ձեռք տալ բաց էլեկտրալարերին:

Եթե էլեկտրասարքավորումը հանկարծակի սկսում է այրվել, ապա.

• հանիր էլեկտրալարը վարդակից, նախապես ձեռքը փաթաթելով չոր շորի կտորով.

• սարքավորումը ծածկիր չոր ծածկոցով կամ այլ շորով.

• եթե այրումը շարունակվում է, անհապաղ ահազանգիր հրշեջ ծառայություն՝ 1-01 հեռախոսահամարով:

Չի կարելի այրվող էլեկտրասարքավորումը մարել ջրով, քանի դեռ այն անջատված չէ հոսանքի ցանցից, այլապես անմիջապես կհոսանքահարվես: Ջուրը կարող է նաեւ կարճ միացում առաջացնել ու հրդեհի պատճառ դառնալ:

Ճիշտ է, ֆիլմերում տեսած կլինես, որ հրդեհը ջրով են մարում, բայց հիշիր, որ ջրով կարող ես մարել այրվող վարագույրը, փայտը, բայց ոչ էլեկտրասարքավորումը:

Էլեկտրականության եւ ջրի հարեւանությունը շատ վտանգավոր է, այդ պատճառով չի՛ կարելի դիպչել էլեկտրասար-



քավորումների հաղորդալարերին թաց ձեռքերով:

• Խոնավ շորով երբեք չարբես միացված հեռուստացույցի էկրանը:

• Ծաղկամանները մի՛ կախիր հեռուստացույցի, ձայնագրիչի, վարդակների վերելում, քանի որ դրանցից կաթող ջուրը կարող է եւ՝ հրդեհի, եւ՝ հոսանքահարման պատճառ դառնալ:

• Չի կարելի մեկ վարդակից միացնել բազմաթիվ էլեկտրասարքեր:

• Տճից, նույնիսկ սենյակից դուրս գալիս սովորություն դարձրու անպայման անջատել բոլոր սարքերը (հեռուստացույց, ձայնագրիչ, էլեկտրասալիկ եւ այլն):

• Մի՛ օգտագործիր էլեկտրական արդուկ, թեյաման, սալօջախ, գոլիչ (պայալմիկ) առանց հատուկ հրակայուն տակդիրի (նկար):

• Վտանգավոր է օգտագործել վնասված մեկուսիչ լարով էլեկտրասարք:

• Ձեռքդ չմտցնես ջրի մեջ, եթե այն տաքացնում է էլեկտրատաքացուցիչով, ինչպես տանն ենք ասում՝ «կիպիտիլմիկով»:

• Քիչ չեն դեպքերը, երբ երեխաներն, անտեսելով նախազուշական բոլոր նորմերը, հետաքրքրությունից դրդված ձեռքը մտցնում են էլեկտրական հաշվիչների, ապահովիչների խցիկը եւ էլեկտրահարվում: Այդպես մի՛ վարվիր:

• Լոգարանում վանճայի ջուրը չի կարելի տաքացնել էլեկտրատաքացուցիչով:

• Լողասենյակում միացրած մի՛ թող կենցաղային էլեկտրասարքը, քանի որ այնտեղ առաջանում են ջրային հոսանքահաղորդ գոլորշիներ:

• Վարդակից խրիչը հանելիս երբեք լարից մի՛ ձգիր: Այն կարող է էլեկտրավել՝ մերկացնելով լարվածության տակ գտնվող հաղորդիչները:

• Էլեկտրասարքերի խրիչները երբեք մի նորոգիր մեկուսիչ ժապավեններով, եթե դրանք կտրվել են, ավելի լավ է նորը դնել:

• Արդուկը մի՛ վերցրու թաց ձեռքերով եւ մի՛ արդուկիր՝ հատակին ոտաբորիկ կանգնած:

• Արդուկի մեջ ջուր լցնելուց առաջ անպայման արդուկը անջատիր հոսանքից:

• Տաք արդուկի շուրջը մի՛ փաթաթիր լարը, որովհետեւ այն կարող է էլեկտրալարի մեկուսիչ մասերը վնասել եւ այրվելով՝ հրդեհ առաջացնել:

Արգելվում է

• օգտագործել անսարք եւ ինքնաշեն էլեկտրասարքավորումներ ու գազի սարքեր.

• էլեկտրական լամպերը փաթաթել թղթով կամ շորով:

Հիշիր. հոսանքահարվելիս անհրաժեշտ է անմիջապես անջատել հոսանքի աղբյուրը: Մի՛ դիպչիր հոսանքահարված մարդուն, քանի դեռ հոսանքը չես անջատել: Կիրառելով հոսանքամեկուսիչ առարկաներ՝ հոսանքահարվածին հեռացրու հոսանքի աղբյուրից: Եթե տուժածի գիտակցությունը տեղն է, թող պառկած, ոտքերը բարձրացրու 30 սմ, կամ շրջիր կողքի՝ բարձրացրած գլխով եւ սրունքներով, ծածկոցով ծածկիր եւ բժիշկ կանչիր:

Զրմուղ

Առաջին անգամ ջրմուղ կառուցել են հռոմեացիները 2000

տարի առաջ եւ անվանել են «ակվեդուկտ»։ Այն ջուր էր «բերում» աղբյուրներից դեպի քաղաք:

Ներկայումս մենք բնակարանում օգտագործում ենք ինչպես սառը, այնպես էլ, հնարավորության դեպքում՝ տաք ջուր: Ջուրը մեր բնակարան է հասնում ջրմուղ ցանցից՝ հատուկ պոմպերի միջոցով: Պոմպերը ստեղծում են մեծ ճնշում, որպեսզի ջուրը հասնի ամենաբարձր հարկերը: Բնակարանի ներսում ներքին ջրմուղ ցանցի միջոցով ջուրը հասնում է խոհանոց, լոգարան, գուգարան:

Օգտագործված ջուրը բնակարանից հեռացվում է կոյուղու միջոցով, որն իրենից ներկայացնում է խողովակների համակարգ:

Հիշիր. ջրմուղ-կոյուղու համակարգը տանը պետք է լինի կարգին վիճակում, այլապես բնակարանը կարող է ողողվել ջրով:

Որո՞նք են բնակարանը ջրով ողողվելու պատճառները.

• խողովակներում ժամանակի ընթացքում առաջացած ճաքերը.

• ջեռուցման մարտկոցներում առաջացած ճաքերը (այս դեպքում բնակարանը կլցվի տաք ջրով եւ գոլորշիով).

• խոհանոցի լվացարանի խցանումը.

• լոգարանի չափից ավելի ջրալցումը.

• կոյուղու խցանումը:

Ի՞նչ պետք է անել բնակարանը ջրով ողողվելու դեպքում:

1. Վթարի մասին անհապաղ հայտնիր ծնողներիդ կամ հարեւաններիդ:

2. Ձանգահարի՛ր բնակչահագործման գրասենյակ:

3. Փակիր բնակարան մուտք գործող ջրի ծորակները:

4. Անջատիր էլեկտրականությունը: Չի կարելի օգտագործել էլեկտրասարքավորումներ:

5. Ջրի հոսքի տեղերում դիր դույլ, հոսքի տեղերը փաթաթիր կտորով եւ սկսիր հավաքել կուտակված ջուրը:

Ինչպե՞ս խուսափել բնակարանը ջրով ողողելուց:

1. Կոյուղու մեջ մի՛ գցիր տարբեր առարկաներ:

2. Մի՛ խցանիր խոհանոցի լվացարանը սննդամթերքի մնացորդներով:

3. Ջրից օգտվելուց հետո անմիջապես փակիր ծորակը:

4. Իմացիր բնակարան մուտք գործող ջրի ծորակների տեղը:

Լվացքի մեքենա

Չի կարելի ինքնուրույն միացնել լվացքի մեքենան կամ միացրած ժամանակ ձեռքը մտցնել դրա մեջ: Ձեռքը կարող է վնասվել:

Երբեք մի՛ բացիր լվացքի մեքենայի դռնակը, կարող ես տաք ջրից այրվածքներ ստանալ:

Տհաճութուններից խուսափելու ամերիկյան բաղադրարար

Կյանքում տհաճություններից ոչ ոք ապահովագրված չէ: Դա չեն կարող երաշխավորել, նույնիսկ, ամենավստահելի ապահովագրական գործակալությունները: Դրանցից խուսափելու բաղադրարարները չկան եւ չեն կարող լինել: Մյուս կողմից էլ չի կարելի պնդել, թե տհաճությունները կոփում են մարդկանց: Պարզապես մարդիկ շատ թե քիչ, փոփոխական հաջողությամբ փորձում են դրանց հետ ապրել, համակերպվել, մոռանալ կամ ինչ-որ մեկի հետ բաժանել ապրումները: Մինչդեռ մարդն այնպես է ուզում հաշտ ապրել աշխարհի եւ ինքն իր հետ:

Ամերիկացի հոգեբան Ռիք Բրեյլը դեռևս 18-րդ դարի վերջերին առաջարկել էր տհաճություններն ու ծախսերը խուսափելու հաղթանակները մի յուրօրինակ համակարգ: Նրա առաջարկած ձեռնարկը կիրառելի է պարզ էր, որ մինչ օրս շատ հոգեբաններ այն կիրառում են իրենց աշխատանքում:

Ահա հոգեբանի սահմանած այն հինգ կանոնները, որոնք օգնում են դիմագրավել ճակատագրի հարվածներին:

Որոշեք տհաճության պարճառը

Ռիք Բրեյլը բոլոր տհաճությունները բաժանում էր երկու խմբի՝ օբյեկտիվ եւ արհեստական պատճառներով առաջացած: Մտերիմների հիվանդությունները, դժբախտ պատահարները, գործերում անհաջողությունը պատկանում են առաջին խմբին: Երկրորդ խմբում ընդգրկված են այլ մարդկանց թերությունների եւ արատների (ազատություն, չարություն, նախանձ, դավաճանություն, հիմարություն, ստախոսություն) հետևանքով առաջացած տհաճությունները: Եթե փորձեք վերլուծել միայն վերջին տարվա ընթացքում ձեր կյանքում տեղի ունեցած բոլոր տհաճ պահերը, ապա կհամոզվեք, որ դրանց զգալի մասի պատճառները գտնվում են երկրորդ խմբում: Օբյեկտիվ պատճառներով առաջացած տհաճությունները կարող են պատահել բոլորի հետ, եւ մենք պարտավոր ենք, հավաքելով ուժերը, հաղթահարել դրանք:

Ի դեպ, շատ իմաստուններ պնդում են, որ մարդու համար ոչինչ այնքան օգտակար չէ, որքան ազնվորեն վերապրած ու հաղթահարած բացասական փորձը: Իսկ այլոց թերությունների կամ վատ արարքների հետևանքով առաջացած տհաճությունների մասին չպետք է մտածել: Դրանք ձերը չեն: Ռիք Բրեյլն ասում էր. «Մի՛ հիվանդացեք ուրիշի հիվանդությամբ»: Չարժե տառապել, եթե ինչ-որ մեկը գիտակցաբար ուզում է ձեզ որեւէ տհաճություն պատճառել:

Այսօրվա եռանդը մի ծախսեք երեկվա անհաջողության վրա եւ մի տառապեք այն տհաճություններով, որոնք դեռ չեն պատահել:



Ապագան դեռ չի ծնվել, իսկ անցյալն արդեն մահացել է: Գոյություն ունի միայն ներկան, որտեղ մենք կանք եւ կարող ենք իրականում ինչ-որ բան անել: Շատ հաճախ մարդիկ տանջվում են իրենց մի բանի համար, որը դեռ չի պատահել եւ հայտնի էլ չէ՝ կպատահի՞, թե՞ ոչ: Կան արդյոք իրենց համար տհաճ կլիմի: Այստեղ, թերեւս, տեղի ունի ինչ-որ հայկական «Կիկոսը» հեքիաթը, որտեղ բավական հետաքրքիր ձեռով կարողանում են դեռ չծնված երեխային թաղել ու դեռ քելեխն էլ տալ: Շատ ուսուցողական հեքիաթ է: Իսկ հայտնի է, որ ժողովրդական բանասիրություն մեջ վառ կերպով արտահայտվում է տվյալ ազգի մտածելակերպն ու հոգեբանությունը:

Այսպես, հնարավորինս վառ (հիմնական

ում սեւ) գույներով պատկերելով «ապագա» անհաջողությունը, մարդիկ այնպես են տառապում, ասես այն արդեն կատարվել է: Կարելի է ասել, այս մազոխիստական վարժանքը շատերին է դուր գալիս: Եթե տառապելու առիթ չկա, ինչու, համենայն դեպս, էլի մի անգամ չտառապե՞ք անցյալում տեղի ունեցած սխալների ու անհաջողությունների համար: Ո՞ր մարդը կյանքում սխալներ չի գործել: Սակայն դառն փորձից օգուտ քաղելու փոխարեն, նրանք սկսում են իրենք իրենց քննադատել, նախատել եւ ափսոսալ, որ ինչ-որ բան այնպես չեն արել կամ ասել: Այսինքն կրկին ու կրկին վերապրել բացասական հույզերի այդ հսկայական «փունջը»: Արդյունքում կյանքն ավելի է բարդանում, մինչդեռ ներկան ազատ է անցյալից եւ ապագայի վախից, եւ եթե մի փոքր ուշադիր լինեք, ապա կնկատեք, որ իրականում ամեն ինչ այնքան էլ վատ չէ:

Մի չափազանցեք դժբախտության չափերը

Որքան հաճախ են մարդիկ դժբախտության պահերին բանականության ծայրին ակնաճ ղնելու փոխարեն ավելի շատ փայփայում դրա հետ կապված իրենց սեփական հույզերը: Չէ՞ որ սառն ու հանգիստ բանականությունը կարող է իրարից տարբերել անհաջողության օբյեկտիվ ու արհեստական պատճառները: Իսկ ի՞նչ են անում հույզերը: Դրանք երկրաչափական պրոգնոստիկա ծավալվում են դեպի ամենայն բացասականը: Եւ ահա մարդու գլուխն սկսում են սողոսկել «Դա երբեք ինձ չի հաջողվի անել», «Մարդ պիտի բախտ ունենա» կամ «Ամբողջ կյանքս պիտի տառապեմ» բնույթի մտքեր: Չափազանցությունը սուտ է, ինքնախաբեություն, մոլեգնած հույզերի, երեսակայության, անվստահության ու վախերի պատճառով իրականության աչառու (սուբյեկտիվ) աղավաղում:

Յուրաքանչյուր երեւույթ ունի իր ժամկետը

Ամերիկացի հոգեբանը խորհուրդ է տալիս. «Եթե հանգամանքները ձեզանից

ուժեղ են, ապա պետք չէ դրանից ողբերգություն սարքել: Ուղղակի թեքվեք, ինչպես կանաչ խոտը ծյան տակ եւ հիշեք, որ շուտով զարուն կգա»: Առավել սուր ապրումների ժամանակ մարդիկ հաճախ հարցնում են իրենք իրենց. «Ինչի՞ համար» կամ «Ինչու՞ հենց ես»: Նմանատիպ արտահայտությունները ոչ թե հանգստացնում, այլ ավելի են բորբոքում ապրումները: Ինչ եղել՝ եղել է, եւ այլևս ոչինչ հնարավոր չէ փոխել: Այս պարագայում ավելի ճիշտ է ընդունել իրականությունը եւ պատրաստվել ապագա ուրախ իրադարձություններին: Եվ ամենակարևորը՝ մի վայրկյան անգամ չկասկածել, որ դա հենց այդպես էլ լինելու է:

Պետք չէ ի ցույց դնել սեփական ապրումները

Միայն կարծիք կա, որ ի ցույց դրված վիշտն ու տհաճություններն այդպիսով կորցնում են իրենց ուժն ու ազդեցությունը: Արտաքինապես դրսևորվելով՝ դրանք միայն ուժեղանում են, քանի որ մարդն սկսում է «ապրել» դրանով, անվերջ ու անընդհատ վերհիշելով տխուր կամ տհաճ իրադարձությունները եւ ստիպելով, որ շրջապատի մարդիկ անարդարացիորեն տանջվեն իր հետ: Արդյո՞ք դա անհրաժեշտ է: Օրինակ՝ ճապոնիայում ընդունված է ապրումների, վիշտը տանելու բուրդի մի այլ կուլտուրա: ճապոնացիները ձգտում են առավելագույնը թաքցնել իրենց ցավը եւ, նույնիսկ, չափազանց ծանր ապրումների ժամանակ փորձում են ժպտալ: Նրանք կարծում են, որ տառապող մարդը չպետք է իր ցավը փոխանցի ուրիշներին: Ռուսները մեջ լրիվ հակառակն են: Բավական է միայն, որ մարդն սկսի հետաքրքրվել ուրիշի հոգսերով ու խնդիրներով, անմիջապես մոռանում է սեփականի մասին ու իրեն ավելի երջանիկ է զգում:

Այս առումով հայերի մասին կարելի է գրել տասնյակ հատորներով, քանի որ մենք գրեթե միշտ անում ենք ամերիկացի հոգեբանի տված խորհուրդների ճիշտ հակառակը: Գուցե ժամանակն է փոխվելու՞:

Մ Ես սիրում եմ բամբասել

Նրանք հաճույք են ստանում բամբասելուց, ինչպես բարեկամների, այնպես էլ անծանոթ մարդկանց կյանքը քննարկելուց: Ուրիշների կյանքը քննարկելը դառնում է նրանց գոյության հիմնական թեման: Ի՞նչն է ստիպում նրանց, որ իրենց անձնական խնդիրները թողած, քննարկեն ուրիշների հարցերը:

Բամբասկոտ մարդը հավատացած է, որ ինքը գործում է հօգուտ գրուցակցի: Այսինքն, նա իր պարտքն է համարում գրուցակցին տեղյակ պահել բամբասվող մարդու մասին, եւ թե ինչ կարելի է նրանից սպասել կամ ակնկալել կոնկրետ իրավիճակներում: Սակայն իրականում բամբասող մարդու դրդապատճառները միազոր չեն: Եկեք դիտարկենք մի քանի պատճառ:

Չորուցել

Չաճախ որեւէ մարդուց բամբասելու դրդապատճառներից մեկն այն է, որ բամբասվող անձն իրականում բարձր է գտնվում բամբասողից: Եւ այս միջոցով բամբասողն անգիտակցաբար կարողանում է ինչ-որ կերպ առնչություն ունենալ տվյալ մարդու աշխարհի եւ այն ամենի հետ, ինչն իրականում նրան անհասանելի է: Մյուս պատճառներից մեկն այն է, որ բամբասող մարդն այս կերպ փորձում է ցույց տալ իր գրուցակցին, որ շատ է վստահում նրան եւ լավություն է

անում ցույց տալով բամբասվող մարդու իրական դեմքը: Բամբասող մարդը թաքնված կերպով գովում է իրեն՝ ակնհայտ ցուցադրելով բամբասվողի բացասական կողմերը, եւ փորձում է շահել գրուցակցի վստահությունը:

Ինքնահարգանքի ոչ բավարար չափաբաժին

Ինչու՞ մարդը, դիմացինին փնտրելու, չարախոսելու եւ նրա թերությունների մասին բարձրաձայնելու փոխարեն, չի խոսում իր ձեռքբերումների, հետաքրքրությունների մասին: Բամբասող մարդն այս կերպ փորձում է տարբերվել ուրիշներից, սակայն իրականում նա հոգու խորքում գիտի, որ այնքան էլ հետաքրքրական մարդ չէ շրջապատի համար: Նա պատմում է իր հարեւաններից, գործընկերներից, քանի որ իր կյանքից ոչ մի հետաքրքիր բան չունի պատմելու:

Արտահայտել գայրույթը

Այն մարդիկ, ովքեր հաճախ են չարախոսում ուրիշների հասցեին, իրականում բավարարված չեն իրենց կյանքով կամ կյանքի մի որեւէ հատված դատարկ է: Սեփական կյանքից բավարարված չլինելը նրանց մեջ ծնում է գայրույթ, որն էլ ընդունելը մշակական է ընդունել սեփական թուլությունը: Այդ իսկ պատճառով այդ գայրույթն ուղղվում է

ուրիշների դեմ, մանավանդ նրանց, ովքեր հաջողությունների են հասել այն ոլորտում, որում նա թերանում է:

Սեփական թուլությունների արդարացնել

Երբ մարդն սկսում է անընդհատ մեղադրել ուրիշների վատ հատկությունները՝ նախանձ, եսակենտրոնություն, ժլատություն եւ այլն, ապա իրականում նա չի կարողանում ընդունել իր մեջ եղած այդ հատկությունները: Սա հոգեբանական պաշտպանության մեխանիզմներից մեկն է, որը կոչվում է պրոյեկցիա, այսինքն՝ մենք ուրիշներին վերագրում ենք հատկություններ, որոնք անգիտակցաբար մենք չենք կարողանում ընդունել մեր մեջ:

Ի՞նչ անել

• Գնահաշիվ ձեր հույզերը

Բամբասելու հիմքում, որպես կանոն, իրականում թաքնված է շատ ուժեղ հույզ կամ իրականացված լինելու ուժեղ պահանջումը: Փորձեք հասկանալ եւ գիտակցել՝ ի՞նչն է ձեզ դրդում բամբասել: Ի՞նչ եք դուք զգում այդ ժամանակ: Եւ այդ դեպքում կգիտակցեք, որ խնդիրը ոչ թե ձեր բամբասանքի օբյեկտն է, այլ՝ դուք:

• Մի՛ խոսեք առանց մտածելու

Երբեք էլ ուշ չէ եւ հարկավոր է, որ դուք հարցնեք ինքներդ ձեզ, արդյո՞ք այդքան անհրաժեշտ է, որ դուք այդ ինֆորմացիան տարածեք: Այո, դա ձեզ հնարավորություն է



տալիս ձեր գրուցակցի ուշադրությունը գրավելու ձեր կողմը: Սակայն՝ հետո՞: Վաղ, թե ուշ ձեր բամբասանքը հասնելու է տվյալ մարդուն, ինչն անկասկած ազդելու է ձեր հեղինակության վրա:

• Այլ զբաղմունք գտեք ձեզ համար

Չաճախ մարդիկ բամբասում են, քանի որ իրենց կյանքը ծանձալի է, ուրիշ հետաքրքրական զբաղմունք չունեն: Փորձեք գտնել այլ ընդհանուր հետաքրքրություններ ձեր գրուցակցի հետ, ինչը ձեզ հնարավորություն կտա ավելի դրական երանգ հաղորդել ձեր գրուցյին:

Անճա Կարապետյան
հոգեբան-խորհրդատու
Ձեր հարցերը հոգեբանին կարող եք ուղարկել hogeban@emergency.am էլ. հասցեով:

